

| | |
|---|--|
| Համարը N 328 Տիպը Որոշում Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ 2006.07.12/17(26) Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ Վավերացնող մարմինը Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 24.07.2006 | Տեսակը Մայր Կարգավիճակը Գործու Ընդունման վայրը Ստեփա Ընդունման ամսաթիվը 27.06.20 Ստորագրման ամսաթիվը 27.06.20 Վավերացման ամսաթիվը Ուժը կորցնելու ամսաթիվը |
|---|--|

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԼՂՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԶԱՓԻՉ ԿԵՏԵՐՈՒՄ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ԱՐՏԱՆԵՏՎՈՂ ԶԱՓՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՐՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԶԱՓՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» հունիսի 2006թ. N 328
 ք.Ստեփանակերտ

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ **ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ** ԶԱՓԻՉ ԿԵՏԵՐՈՒՄ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ԱՐՏԱՆԵՏՎՈՂ ԶԱՓՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՐՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԶԱՓՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 171-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է.**

- Հաստատել՝
- ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության **տարածքում գործող** չափիչ կետերում ավտոտրանսպորտային միջոցներից արտանետվող չափման ենթակա աղտոտող նյութերի չափման կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.
 - բ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության **տարածքում գործող** չափիչ կետերում ավտոտրանսպորտային միջոցներից արտանետվող չափման ենթակա աղտոտող նյութերի ցանկը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՂԱՆԻԵԼՅԱՆ**

Հավելված 1
ԼՂՀ կառավարության
 «27» հունիսի 2006թ.
 թիվ 328 որոշման

Կ Ա Ր Գ

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ **ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ** ԶԱՓԻՉ ԿԵՏԵՐՈՒՄ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ԱՐՏԱՆԵՏՎՈՂ ԶԱՓՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՐՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԶԱՓՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության **տարածքում գործող** չափիչ կետերում ավտոտրանսպորտային միջոցներից արտանետվող չափման ենթակա աղտոտող նյութերի չափման կարգը:

Չափիչ կետերում իրականացվող հիմնական աշխատանքներն են՝

ա) ավտոտրանսպորտային միջոցներից արտանետվող չափման ենթակա աղտոտող նյութերի չափումները,

բ) չափման արդյունքների գրանցումն ավտոտրանսպորտային միջոցներից աղտոտող նյութերի արտանետումների չափումների հաշվառման մատյանում,

գ) ավտոտրանսպորտային միջոցներից աղտոտող նյութերի արտանետումների

նորմատիվներին համապատասխանության կտրոնի հաշվառումը, լրացումն ու տրամադրումը,

դ) չափումների արդյունքներն ամփոփելը և կիսամյակային ու տարեկան հաշվետվություններ կազմելն ու ներկայացնելը մթնոլորտային օդի պահպանության բնագավառում լիազորված պետական մարմին (այսուհետ՝ լիազորված պետական մարմին):

3. Ավտոտրանսպորտային միջոցներից աղտոտող նյութերի չափումներն իրականացվում են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 171-րդ հոդվածի 3-րդ կետում նշված ժամկետներում:

II. ՉԱՓԻՉ ԿԵՏԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Ավտոտրանսպորտային միջոցներից արտանետվող չափման ենթակա աղտոտող նյութերի չափումներն իրականացվում են միջպետական և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստանդարտների պահանջներին համապատասխան:

5. Չափման արդյունքների և ավտոտրանսպորտային միջոցներից աղտոտող նյութերի արտանետումների համար սահմանված նորմատիվների համապատասխանության դեպքում ավտոտրանսպորտային միջոցներ տնօրինողներին տրվում է աղտոտող նյութերի նորմատիվների համապատասխանության կտրոն (այսուհետ՝ համապատասխանության կտրոն)՝ ըստ լիազորված պետական մարմնի հաստատած ձևի:

Համապատասխանության կտրոնները լիազորված պետական մարմնի կողմից համարակալվում և տրվում են ավտոտրանսպորտային միջոցներից աղտոտող նյութերի արտանետումների չափումներ իրականացնելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց (այսուհետ՝ լիցենզառու)՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզիայի ձևակերպումից հետո՝ 5-օրյա ժամկետում:

6. Չափման արդյունքները չափիչ կետերում գրանցվում են ավտոտրանսպորտային միջոցներից աղտոտող նյութերի արտանետումների չափումների հաշվառման մատյանում՝ համաձայն թիվ 1 ձևի:

Ավտոտրանսպորտային միջոցներից աղտոտող նյութերի արտանետումների չափումների հաշվառման մատյանի էջերը համարակալվում են և կնքվում լիազորված պետական մարմնի կողմից:

7. Չափումների կիսամյակային և տարեկան ամփոփ արդյունքները ներկայացվում են լիազորված մարմին մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 15-ը և հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 15-ը՝ համաձայն թիվ 2 ձևի:

8. Լիցենզառուն սույն կարգի 2-րդ կետում նշված աշխատանքների հավաստիության համար կրում է պատասխանատվություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Լիցենզառուն պարտավոր է հետևել չափիչ կետի սարքավորումների սարքինությանը և կատարել սարքավորումների համապատասխան տեխնիկական սպասարկում, ինչպես նաև սարքավորումները ներկայացնել ստուգաչափման՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

III. ՉԱՓԻՉ ԿԵՏԵՐԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ, ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

10. Չափիչ կետերը պետք է ունենան հետևյալ սարքավորումներն ու չափման միջոցները, որոնք պետք է ապահովեն չափումների ճշտությունը՝ չգերազանցելով նշված սարքավորումների և չափման միջոցների համար նախատեսված թույլատրելի սխալները՝

ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության **տարածքում գործող** չափիչ կետերում ավտոտրանսպորտային միջոցներից արտանետվող չափման ենթակա աղտոտող նյութերի ցանկը և չափման կարգը հաստատելու մասին» թիվ 328 որոշման թիվ 2 հավելվածում նշված աղտոտող նյութերը չափող անհրաժեշտ զագաանալիզատորներ,

բ) ավտոտրանսպորտային միջոցների շարժիչի ծնկաձև լիստեռի պտույտների հաճախականության չափման միջոց (տախտմետր),

- զ) մթնոլորտային ճնշման չափման միջոց (բարոմետր),
 դ) մթնոլորտի ջերմաստիճանի չափման միջոց (ջերմաչափ):
11. Չափումները կարող են իրականացվել սահմանափակ օդափոխանակությամբ (փակ տարածք) և անսահմանափակ օդափոխանակությամբ (բաց տարածք) տարածքներում:
 Եթե չափումները կատարվում են փակ **տարածքում**, ապա անհրաժեշտ է գազահեռացման համակարգի առկայություն:
12. Չափիչ կետերում պետք է լինեն հետևյալ փաստաթղթերը՝
 ա) ավտոմեքենաների և շարժիչների համար՝ թողարկող կազմակերպության կողմից տրամադրվող շահագործման հրահանգները,
 բ) սարքավորումների և չափման միջոցների համար՝ թողարկող կազմակերպության կողմից տրամադրվող շահագործման հրահանգները:
13. Չափիչ կետերում կիրառվող (օգտագործվող) սարքավորումները և չափման միջոցները պետք է լինեն տեսակը հաստատված, ստուգաչափված կամ վկայագրված՝ համաձայն «Չափումների միասնականության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի:

IV. ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

14. Սույն կարգի 10-րդ կետով սահմանված սարքավորումների շահագործումն իրականացվում է՝ պահպանելով թողարկող կազմակերպության շահագործման հրահանգները:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի
 ղեկավար-նախարար**

Ս. Գրիգորյան

Ձև 1

**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ԱՂՏՈՏՈՂ ԼՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ
 ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆ**

| Չափման ամսաթիվը | Ավտոմեքենայի մակնիշը | Ավտոմեքենայի պետական համարանիշը | Օգտագործվող վառելիքի տեսակը | Համապատասխանության կտրոնի համարը | Չափվող աղտոտող նյութերի անվանումը (+) | | | Արտանետման չափման արդյունքն ըստ աղտոտող նյութերի | | | Ստուգողի ստորագրությունը | Ծանոթություն |
|-----------------|----------------------|---------------------------------|-----------------------------|----------------------------------|---------------------------------------|---------------|--------------|--|---------------|--------------|--------------------------|--------------|
| | | | | | ածխածնի օքսիդ | ածխաջրածիններ | ծխայնություն | ածխածնի օքսիդ | ածխաջրածիններ | ծխայնություն | | |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |

Ձև 2

ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ

| Ստուգված ավտոմեքենաների տեսակը | Ստուգված ավտոմեքենաների քանակը | Նորմատիվները գերազանցած ավտոմեքենաների քանակը (այդ թվում՝ 10 և ավելի անգամ) | Կարգավորված ավտոմեքենաների քանակը (այդ թվում՝ 10 և ավելի անգամ գերազանցողներից) | Տրված համապատասխանության կտրոնների քանակը |
|--------------------------------|--------------------------------|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| իթև մարդատար | | | | |
| իթև բեռնատար (< iտ) | | | | |
| մեր բեռնատար (> iտ) | | | | |
| դամենը | | | | |

Հավելված 2
ԼՂՀ կառավարության
 «27» հունիսի 2006թ.
 թիվ 328 որոշման

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ **ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ** ՉԱՓԻՉ ԿԵՏԵՐՈՒՄ ԱԿՏՈՏՐԱՆԱԴՈՐՏԱՅԻՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ԱՐՏԱՆԵՏՎՈՂ ՉԱՓՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՐՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ

Ավտոտրանսպորտային միջոցներից արտանետվող, չափման ենթակա աղտոտող նյութերն են՝

ածխածնի օքսիդը,
ածխաջրածինները,
ծխայնությունը:

ԼՂԳ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Ս. Գրիգորյան